Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Արծվաբերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմումը՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
- Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ, ինչպես նաև միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ (կամավոր ատեստավորում անցած)
- Անձնագրի պատճենը,
- Ինքնակենսագրություն (Ձև 4),
- Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
- Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2025 թ. հունվարի 7-ից մինչև հունվարի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025 թ. հունվարի 22-ին ժամը 15:00-ին, Տավուշի մարզի Արծվաբերդի հիմնական դպրոցում. Հասցեն՝ գ. Արծվաբերդ, 1 փ. , շենք 23:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 73-04-61 հեռախոսահամարով: